

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ
Հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրների
կուսակցությունների ինստիտուցիոնալացման ընթացքը և
վիճակը. Ուկրաինայի և Վրաստանի դեպքերը

ՏԻԳՐԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Բյուրոսի անվան պետական համալսարան

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո մի շարք հեղինակավոր մասնագետներ պնդում էին, որ դրա արդյունքում ձևավորված նորանկախ պետություններում արագորեն հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր: Ավելի ուշ՝ 2000-ականների սկզբին, պարզ դարձավ, որ տեղի է ունենում շատ ավելի բարդ ու աննախադեպ գործընթաց՝ հետխորհրդային տրանսֆորմացիա, որում հայտնված երկրները տարբերվում են ինչպես իրենց հետազօծերով, այնպես էլ նպատակներով: Ըստ այդ դասակարգման, Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան ու Մոլդովան դիտարկվում էին նույն խմբում՝ որպես ժողովրդավարական վարչակարգերի ձևավորմանը միտված երկրներ, որոնք 2009թ. ընդգրկվեցին ԵՄ նոր նախաձեռնության՝ «Արևելյան գործընկերություն» ծրագրում՝ նպատակ ունենալով աջակցել ժողովրդավարացման գործընթացներին: Հետկոմունիստական երկրներում կայացած ժողովրդավարական վարչակարգերի հաստատման տեսակետից բացառիկ՝ հարացույցային նշանակություն ունի կայուն և ներկայացուցչական կուսակցական համակարգերի ձևավորումը: Այդ նպատակի իրագործումը հնարավոր է կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման միջոցով, որի արդյունքում այդ կառույցներին հաղորդվում է պատշաճ բովանդակություն և դրանց գործունեությունը կառուցվում է սկզբունքների ու արժեքների հիման վրա: Այդ գործընթացը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ձախողվել է՝ խոչընդոտելով ժողովրդավարական վարչակարգերի ձևավորմանը: Ընդ որում, նաև այն երեք երկրներում (Հայաստան, Վրաստան, Ուկրաինա), որտեղ տեղի են ունեցել «գունավոր» հեղափոխություններ, որոնց գլխավոր նպատակներից մեկն էլ հռչակվել էր ժողովրդավարական վարչակարգերի հաստատումը: Պարզելու համար, թե ինչու են տեղի ունենցել հիշյալ ձախողումները և որոնք են ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավորությունները, հոդվածում վերլուծվում են հետխորհրդային

տրանսֆորմացիայի ընթացքում առավել համեմատելի երկրներում՝ Վրաստանում և Ուկրաինայում, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ձևավորման հետ կապված զարգացումները, որոնք դիտարկվել են երկփուլ ձևաչափով՝ մինչ «գունավոր» հեղափոխությունները և դրանից հետո, թեև այդ ժամանակահատվածների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ փուլերը էական տարբերություններ չունեն դիտարկվող երկրներում ժողովրդավարացման գործընթացի և, մասնավորապես, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման տեսակետից:

Բանալի բառեր

Հետխորհրդային տրանսֆորմացիա, կուսակցություններ, ինստիտուցիոնալացում, Ուկրաինա, Վրաստան, ժողովրդավարացում

Նախաբան

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո մի շարք հեղինակավոր մասնագետներ պնդում էին, որ դրա արդյունքում ձևավորված նորանկախ պետություններում արագորեն հաստատվելու են ժողովրդավարական վարչակարգեր:¹ Ավելի ուշ՝ 2000-ականների սկզբին, պարզ դարձավ, որ տեղի է ունենում շատ ավելի բարդ ու աննախադեպ գործընթաց՝ հետխորհրդային տրանսֆորմացիա, որում հայտնված երկրները տարբերվում են ինչպես իրենց հետագծերով, այնպես էլ նպատակներով:² Ըստ այդ դասակարգման, Հայաստանը, Վրաստանը, Ուկրաինան ու Մոլդովան դիտարկվում էին նույն խմբում՝ որպես ժողովրդավարական վարչակարգերի ձևավորմանը միտված երկրներ: Պատահական չէ, որ այդ երկրները 2009թ. ընդգրկվեցին ԵՄ նոր նախաձեռնության՝ «Արևելյան գործընկերություն» ծրագրում՝ նպատակ ունենալով աջակցել ժողովրդավարացման գործընթացներին /Բելառուսի և Ադրբեջանի

¹ Huntington S. *The Third Wave: Democratization in the Late Twentieth Century*. Norman. 1991.

² Թորոսյան Տ., Սուքիասյան Հ., Հետխորհրդային տրանսֆորմացիայի երեք փուլերը, երեք խմբերը և երեք հարացույցները, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 1(1), 2014, 19-32

ընդգրկումն այլ հանգամանքներով էր պայմանավորված³, ինչը դուրս է ներկայացվող հետզոտության շրջանակներից/։ Ծրագրի մեկնարկից անցել է գրեթե մեկ և կես տասնամյակ, սակայն ժողովրդավարացման տեսակետից էական առաջընթաց չի արձանագրվել⁴։ Հատկանշական է, որ չորս երկրներն ունեցել են տարբեր հետազոտեր, որոնցում կարելի է նկատել ինչպես ընդհանրություններ, այնպես էլ զգալի տարբերություններ։ Մոլդովան մյուս երեք երկրներից տարբերվում է առնվազն երեք էական գործոններով՝ այնտեղ աշխարհաքաղաքական մրցակցությամբ պայմանավորված Մերձդնեստրի հակամարտությանն առնչվող ռազմական գործողություններ չեն վերսկսվել, «գունավոր» հեղափոխություն տեղի չի ունեցել և այդ երկիրն ունի Եվրոպական միության անդամ հարևան պետություն՝ Ռումինիան, որի տիտղոսակիր բնակչությունը նույն էթնիկ ծագումն ունի, ինչ մոլդովացիները։ Քանի որ այդ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ ժողովրդավարացման գործընթացի վրա, Մոլդովայի դեպքը չի դիտարկվել այդ գործընթացի ձախողման պատճառների հետազոտության ընթացքում /Հայաստանի դեպքը կներկայացվի առանձին/, հետևաբար այդ հետազոտության շրջանակները սահմանափակված են Վրաստանով և Ուկրաինայով։ Գրեթե բոլոր մասնագետները պնդում են, որ հետկոմունիստական երկրներում կայացած ժողովրդավարական վարչակարգերի հաստատման տեսակետից բացառիկ՝ հարացույցային նշանակություն ունի կայուն և ներկայացուցչական կուսակցական համակարգերի ձևավորումը⁵։ Այդ նպատակի իրագործումը

³ **Թորոսյան Տ., Վարդանյան Ա.**, Եվրասիական կենտրոնի մեծ աշխարհաքաղաքական վերաբեռնավորման ավարտը, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2020, 1, 5-52

⁴ **Delcour L. & Wolczuk K.**, The EU's Unexpected 'Ideal Neighbour'? The Perplexing Case of Armenia's Europeanisation. *Journal of European Integration*, 2015, 37(4), 491-507.

⁵ **Diamond L., Linz J. & Lipset M. S.**, *Politics in Developing countries, Comparing Experiences with Democracy*. Boulder, CO: Lynne Rienner. 1990. **Kitschelt H., Mansfeldova Z., Markowski R., & Toka G.**, *Post-Communist Party Systems: Competition, Representation, and Inter-Party Cooperation*. Cambridge:

հնարավոր է կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման միջոցով, որի արդյունքում այդ կառույցներին հաղորդվում է պատշաճ բովանդակություն և դրանց գործունեությունը կառուցվում է սկզբունքների ու արժեքների հիման վրա:⁶ Այդ գործընթացը հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում ձախողվել է՝ խոչընդոտելով ժողովրդավարական վարչակարգերի ձևավորմանը: Ընդ որում, նաև այն երկրներում, որտեղ տեղի են ունեցել «գունավոր» հեղափոխություններ, որոնց գլխավոր նպատակներից մեկն էլ հռչակվել էր ժողովրդավարական վարչակարգերի հաստատումը:

Պարզելու համար, թե ինչու է տեղի ունենցել հիշյալ ձախողումները և որոնք են ստեղծված իրավիճակից դուրս գալու հնարավորությունները, ստորև կներկայացվեն ԽՍՀՄ փլուզումից հետո Վրաստանում և Ուկրաինայում կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ձևավորման հետ կապված զարգացումները, որոնք դիտարկվել են երկփուլ ձևաչափով՝ մինչ գունավոր հեղափոխությունները և դրանից հետո, թեև այդ ժամանակահատվածների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ փուլերը էական տարբերություններ չունեն դիտարկվող երկրներում ժողովրդավարացման գործընթացի⁷ և, մասնավորապես, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման տեսակետից:

Cambridge University Press. 1999. **Mainwaring S. & Scully T. R.**, Party Systems in Latin America. S. Mainwaring & R. S. Timothy (Eds.), *Building Democratic Institutions: Party Systems in Latin America*. Stanford, CA: Stanford University Press. 1995, (pp. 1-34).

⁶ **Թորոսյան Տ.**, Կուսակցությունների ինստիտուցիոնալացումն ընդդեմ «գունավոր» հեղափոխությունների. Հայաստանի քաղաքական համակարգի ճգնաժամի հաղթահարման դժվարություններն ու հնարավորությունները, 2022.

<https://www.luys.am/index.php?m=publications&lang=arm&p=125>

⁷ **Delcour L. & Wolczuk K.**, նշվ. աշխ.

Մինչ «գունավոր» հեղափոխությունները

ԽՍՀՄ փլուզումից հետո հետկոմունիստական երկրները պետականության ձևավորման տեսակետից հայտնվել էին խիստ անբարենպաստ պայմաններում: Մի կողմից, այդ երկրների հասարակություններն ունեին միայն կոմունիստական կուսակցության գործունեության փորձ, որի էական տարբերություններն ու շեղումը կուսակցությունների և կուսակցական համակարգերի ձևավորման բնականոն սկզբունքներից ի վերջո դարձան ձախողումների ու ԽՍՀՄ փլուզման գլխավոր պատճառներից մեկը: Մյուս կողմից, քաղաքական մրցակցությունն արմատապես ժխտող ամբողջա-տիրական վարչակարգին հատուկ միակուսակցականության բացարձակ տիրապետությունը և այլ քաղաքական հոսանքների ու գաղափարախոսությունների ոչ միայն գործունեությունն, այլև ուսումնասիրությունը քրեականացրած երկրում չէր կարող ձևավորվել գիտելիք՝ այլ վարչակարգ ունեցող պետություն կառուցելու վերաբերյալ: Առավել ևս, որ այդ երկրներում, որպես կանոն, անկախության հռչակումից հետո իշխանությունն անցնում էր կառավարման յուրահատուկ փորձ ունեցող կոմունիստական ֆունկցիոներների, որոնք արագորեն փոխում էին կոմունիստական հանդերձանքը, երբեմն նաև բառապաշարը, սակայն ոչ՝ մտածողությունը, արժեքներն ու սկզբունքները: Այդ պատճառով, առաջին 15 տարիների (հետխորհրդային տրանսֆորմացիայի առաջին փուլի) ընթացքում, երբ ձևավորվում էին այդ պետությունների հիմքերը⁸, կուտակվում էին բազմաթիվ հիմնարար թերություններ, որոնց հետևանքները լիարժեքորեն դրսևորվեցին ավելի ուշ՝ երկրորդ և երրորդ փուլերում: Հետևաբար, արժե հակիրճ անդրադառնալ Վրաստանի և Ուկրաինայի քաղաքական, մասնավորապես, կուսակցական համակարգի ձևավորման հիմնական քայլերին՝ մինչ այդ

⁸ Թորոսյան Տ., Սուքիասյան Հ., նշվ. աշխ.

երկրներում համապատասխանաբար 2003 և 2004թթ. գունավոր հեղափոխություններ տեղի ունենալը:

Վրաստանը չափազանց բուռն արձագանքեց միակուսակցական համակարգի վերացմանը: 1990թ. տեղի ունեցած առաջին բազմակուսակցական ընտրություններին մասնակցեցին 34 կուսակցություններ: Թեև մեկ տարի անց երկիրը հռչակվեց նախագահական հանրապետություն (նախագահ ընտրվեց Զ. Գամսախուրդիան), սակայն դա քաղաքական ուժերի համախմբման չհանգեցրեց: Երկրի նախագահի խիստ անձնակենտրոն նկրտումները, համախոհների հետ դիմակայությունը և ծայրահեղականությունը հանգեցրեցին խորհրդարանի լուծարմանը, զինված բախումների և իշխանության բռնի փոփոխության:⁹ Հաջորդ՝ 1992թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցեցին 41 կուսակցություններ և դաշինքներ, որոնցից խորհրդարան անցած 24 կուսակցություններից ու դաշինքներից հաջորդ ընտրությանն առանց փոփոխության մասնակցեց միայն մեկը: Ընդ որում, այդ՝ 1995թ. ընտրություններին մասնակցեցին 95 քաղաքական ուժեր:¹⁰ Վրաստանի քաղաքացիների միությունը փոխարինեց Կլոր սեղանազատ Վրաստան դաշինքին՝ որպես խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժ, սակայն այն նույնպես ուներ իշխանության կուսակցության բոլոր հիմնական հատկանիշները: Երկրում իրավիճակի փոփոխությունը կապվում էր նաև սահմանադրության փոփոխությունների հետ: 1995թ. ընդունված սահմանադրությունն արտացոլում էր երկրի նախագահ ընտրված Է. Շևարդնաձեի պատկերացումները Վրաստանին հարիր կառավարման մոդելի վերաբերյալ՝ այն հիշեցնում էր ամերիկյան կոշտ նախագահական վարչակարգը:

⁹ **Kuzio T.**, *Aspects of the Orange Revolution VI: Post-Communist Democratic Revolutions in Comparative Perspective*. Stuttgart: Ibidem-Verlag, 2007.

¹⁰ **Տետրաձե Լ., Մելիքիձե Գ.**, Վրաստանի բազմակուսակցական համակարգը. առանձնահատկություններ, մարտահրավերներ և հեռանկարներ, *Հայկական քաղաքագիտական հանդես*, 2016, 1, 115-128:

Շևարդնաձեի նախագահության շրջանի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրի ղեկավարման վրա մեծ ազդեցություն ունեցրած ամենուրեք թափանցող կոռուպցիան և թույլ պետական ներուժը, պետությունը հիշեցնում էր «օլիգարխիայի վիճարան», որտեղ ազդեցիկ խմբերը մրցակցում էին քաղաքական և տնտեսական իշխանության համար, իսկ պետությունը ընդունակ չէր ապահովել ընդհանուրի բարեկեցությունը:¹¹ Չ. Քինգը համարում էր, որ «Վրաստանը խրոնիկական թույլ պետություն է: Մակայն տարածաշրջանում, որտեղ կան միայն նվազագույն թվով հաջողված պետություններ, Վրաստանի վիճակը հատկապես ծանր է... Իսկապես, հարց է առաջանում. կա՞րողոք Վրաստան անունով պետություն՝ որևէ նշանակալի իմաստով»:¹² Այդուհանդերձ, 2000-ականների սկզբին Հարավային Կովկասում Վրաստանը ստացել էր բացառիկ դիրք. «սառեցված» էին Աբխազիայի և Հարավային Օսիայի հակամարտությունները, մինչդեռ շարունակվում էր տարածաշրջանի մյուս երկու ճանաչված պետությունների՝ Հայաստանի ու Ադրբեջանի դիմակայությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված: Դրա հետևանքով միջազգային հանրության աջակցությունը, այդ թվում և կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացմանն ուղղված, հիմնականում ուղղորդվում էր դեպի Վրաստան, թեև, իհարկե, դոնոր կազմակերպություններն ու փորձագետներն ունեին Վրաստանի կուսակցական համակարգի աղետալի վիճակի մասին ճշգրիտ պատկերացում: Մասնավորապես, 2002 թվականին Վրաստանի ժողովրդավարության և կառավարման ոլորտներում Միջազգային զարգացման ամերիկյան գործակալության (United States Agency for International Development (USAID)) ֆինանսավորած ծրագրերի կապակցությամբ հրապարակումն արձանագրում էր. «Վրաստանի կուսակցական համակարգը մնում է թույլ, սաղմնային

¹¹ **Wheatley J.**, Georgia from National Awakening to Rose Revolution: Delayed Transition in the Former Soviet Union. Aldershot: Ashgate. 2005.

¹² **King Ch.**, Potemkin Democracy. Four Myths about Post-Soviet Georgia. *The National Interest*, 64, Summer, 2001, 93–104.

և անկայուն: Կուսակցությունները, խորհրդարանական խմբակցությունները ձևավորվում են, տրանսֆորմացվում ու փլուզվում»:¹³

Ուկրաինայի Ռադայի առաջին երկու գումարումների (1990 և 1994թթ.) ընտրություններն անցկացվել են մեծամասնական ընտրակարգով, հաջորդ երկուսը (1998 և 2002թթ.)՝ խառը ընտրակարգով, ևս երկուսը (2006 և 2007թթ.)՝ համամասնական ընտրակարգով: 2012թ. խորհրդարանական ընտրությունները կրկին կազմակերպվեցին խառը ընտրակարգով: Դա վկայում է այդ երկրում ընտրական օրենսդրության շարունակական փոփոխությունների մասին, ինչը ընտրական գործընթացների, ինչպես նաև քաղաքական համակարգի անկայունության գլխավոր պատճառներից մեկն է: Ընդ որում, դա ոչ միայն նախահեղափոխական իշխանություններին է վերաբերում, այլև երկու՝ 2004թ. և 2014թ. հեղափոխություններից հետո ձևավորված իշխանություններին: Ավելին, խնդիրը միայն ընտրական համակարգին չի վերաբերում, այլ նաև կոնկրետ կարգավորումներին: Մասնավորապես, «Ընտրությունների մասին» Ուկրաինայի օրենքում փոփոխությամբ արգելվեց դաշինքների մասնակցությունը 2012թ. խորհրդարանական ընտրություններին: Թեև նման քայլերը հնարավորություն սովեցին Յանուկովիչի «Շրջանների կուսակցությանը» (ՇԿ) 2012թ. ընտրությունների արդյունքներով պահպանել խորհրդարանական մեծամասնության դիրքը, սակայն ստացան մոտ 25 տոկոսով ավելի քիչ ձայներ, քան 2007 թվականին:¹⁴ Ուկրաինայի անկախության նախահեղափոխական շրջանի՝ Կուչմայի նախագահության ժամանակահատվածի (1994-2005թթ.) խնդիրների հետ կապված հաճախ հիշատակվում են քաղաքական ու տնտեսական ոլորտների կոռուպցիոն միահյուսվածությունը և ոչ ֆորմալ

¹³ ARD, Inc., Democracy and Governance Assessment of Georgia. Washington, DC: ARD, Inc. 2002.

¹⁴ **Rybiy O.**, Party System Institutionalization in Ukraine, *Demokratizatsiya*, 2013.

պրակտիկայի գերիշխանությունը ֆորմալ ինստիտուտների նկատմամբ:¹⁵

«Գունավոր» հեղափոխություններից հետո

2003թ. Վարդերի հեղափոխությունը Վրաստանում և 2004թ. Նարնջագույն հեղափոխությունը Ուկրաինայում շատերը դիտարկում էին որպես այդ երկրներում ժողովրդավարական ճեղքման և ինստիտուցիոնալացված ժողովրդավարական կուսակցական համակարգի ձևավորման հնարավորություն:¹⁶ Ենթադրվում էր, որ կուսակցությունները, որոնք գլխավորում են «գունավոր» հեղափոխությունները (Ուկրաինայում՝ Բատկիվշինան, Վրաստանում՝ Էրթիանի նացիոնալուրի Մոձրաոբան (ԷՆՄ)), կինստիտուցիոնալացվեն և երիտասարդ ժողովրդավարություններին կհաղորդեն լեգիտիմություն ու կայունություն:¹⁷ Միգուցե դրանից ոգևորված շատերը չէին ցանկանում տեսնել, որ երկու պետություններում էլ հակասահմանադրական ճանապարհով՝ զանգվածային ճնշումների միջոցով իշխանափոխություն իրականացրած ուժերի առաջնորդների՝ իրենց իշխանության հաստատման ու ամրապնդման առաջին իսկ քայլերն արվում էին գործող օրենսդրության կոպիտ խախտումներով:¹⁸ Վրաստանում 2003թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքները վիճարկող բողոքի ակցիաները ընդլայնելով՝ ցուցարարները

¹⁵ **D’Anieri Paul**, *Understanding Ukrainian Politics. Power, Politics, and Institutional Design*. Armonk, NY: M.E. Sharpe. 2007.

¹⁶ **Bader M.**, Party politics in Georgia and Ukraine and the failure of Western assistance, *Democratization*, 2010, 17, 6, December, 1085–1107.

¹⁷ **Mierzejewski-Voznyak M. G.**, Party politics after the colour revolutions: party institutionalisation and democratisation in Ukraine and Georgia, *East European Politics*, 2014, 30, 1, 86-104.

¹⁸ **Թորոսյան Ս.**, *Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա*: 2006թ., էջ 101-105:

Թորոսյան Ս., Վարդանյան Ա., Ուր են տանում «գունավոր»

հեղափոխությունների ճամփաները: *Հանրային կառավարում*, 2005, 3, 90-101:

ներխուժեցին խորհրդարան նորընտիր օրենսդիր մարմնի առաջին նիստի ժամանակ, ընդհատեցին այն և կարճ ժամանակում ճնշումներով ստիպեցին հրաժարական տալ նախագահ Է. Շևարճնաձեին, առանց իրավական հիմքի չեղյալ համարեցին ընտրությունների համամասնական մասը, այդ մասով նշանակեցին նոր ընտրություններ, թեև Վրաստանի օրենսդրությունը նման բան չէր նախատեսում, ու ակնհայտ ճնշումների պայմաններում այդ ընտրություններում ստացան համամասնական տեղերի մեծամասնությունը: Խոստանալով չվերանայել մեծամասնական ընտրակարգով արձանագրված արդյունքները՝ իրենց կողմը գրավեցին այդ ընտրակարգով արդեն իրենց ընտրատարածքներում հաղթած թեկնածուների ճնշող մեծամասնությանը, որոնք ընտրության էին գնացել Շևարճնաձեի գլխավորած իշխանության հետ պայմանավորվածություններով (հետխորհրդային տարածքի ընտրական ավանդույթներից է մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների ճնշող մեծամասնության կողմնորոշումը դեպի օրվա իշխանություն): Վարդերի հեղափոխության արդյունքում Վրաստանում ևս մեկ անգամ տեղի ունեցավ իշխանության ոչ սահմանադրական փոփոխություն և հերթական իշխանության կուսակցությունը՝ Միացյալ ազգային շարժումը, դարձավ գերիշխող քաղաքական ուժ: Մակայն բացասական միտումները շարունակվեցին: 2004թ. Ընտրություններին մասնակցած 20 կուսակցություն/դաշինքներից հաջորդ ընտրություններին միայն 4-ը մասնակցեցին անփոփոխ տեսքով:¹⁹ Հեղափոխությունից հետո կուսակցական համակարգում առկա բարդ խնդիրները փորձ արվեց լուծել արհեստականորեն՝ արբանյակ կուսակցությունների միջոցով, որոնք խոչընդոտում էին իշխանության համար անցանկալի քաղաքական ուժերի հաջողությանը:²⁰

¹⁹ **Nodia G., Scoltbach A. P.**, Coordinators – Editors; *The Political Landscape of Georgia; Political Parties: Achievements, Challenges and Prospects.* EburonUitgeverij B.V. 2006.

²⁰ **Տեղրան Լ., Մելիքիձե Գ.**, նշվ. աշխ.

Ուկրաինայում ևս «գունավոր» հեղափոխության հաղթանակն արձանագրվեց օրենսդրության կոպիտ խախտումներով: 2004թ. նախագահական ընտրությունների արդյունքները վիճարկող ուժերը՝ Վ. Յուշչենկոյի գլխավորությամբ, բողոքի զանգվածային ակցիաներով ու ճնշումներով պարտադրեցին չեղյալ համարել նախագահական ընտրությունների երկրորդ փուլի արդյունքները և նշանակել Ուկրաինայի ընտրական օրենսդրությամբ չնախատեսված նախագահական ընտրությունների **երրորդ փուլ**, նպատակ ունենալով հնարավորինս արագ նախագահ կարգել Յուշչենկոյին:²¹

Երբ մարդկանց հոծ խմբերը հեռացան Թբիլիսիի և Կիևի հրապարակներից, պարզ դարձավ, որ այդ երկրներում տեղի ունեցած գունավոր հեղափոխությունները ժողովրդավարացմանը նպաստել են ավելի շուտ ձևականորեն, քան էականորեն:²² Մակայն արդեն անցել է ավելի գրեթե երկու տասնամյակ ու բոլոր տվյալները կան գնահատելու համար, թե արդյո՞ք ստացվել են ակնկալվող արդյունքները: Ուկրաինայում և Վրաստանում ժողովրդավարության վիճակը քննարկող գրականության զգալի մասը ընդհանուր պնդումներ է անում, որ այդ երկրները ընդունակ չեն հասնելու խոր ժողովրդավարական լեգիտիմության:²³ Այդ պնդումները այս աշխատանքում քննարկվող հարցերի տեսակետից ավելի շուտ հեղինակավոր գնահատականներ են, քան հետազոտության արդյունք, քանի որ այդ հաստատագրումներն

²¹ **Թորոսյան Ս.**, *Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա*: 2006թ., էջ 101-105:

Թորոսյան Ս., Վարդանյան Ա., նշվ. աշխ.

²² **Mierzejewski-Voznyak**, նշվ. աշխ.

²³ **Carothers T.**, The End of the Transition Paradigm. *Journal of Democracy*, 2002, **13**, (1), 5–21.

Fairbanks C. H., Revolution Reconsidered. *Journal of Democracy*, 2007, **18**, 1, 42–57.

McFaul M., Ukraine Imports Democracy: External influences on the Orange Revolution. *International Security*, 2007, **32** (2): 45–83; **Riabchuk M.**, Ukraine: Lessons Learned from Other Post-communist Transition. *Orbis*, 2008, Winter, 41–63.

արվում են երևույթն այլ հարցադրման շրջանակներում դիտարկելիս՝ վարչակարգի փոփոխություն, հեղափոխությունների կոնցեպտուալացում, հետկոմունիստական տրանսֆորմացիայի անհաջողություն և այլն: Մինչդեռ, համապատասխան գործիքակազմի կիրառմամբ արձանագրումը, որ, օրինակ, ուկրաինական Բատկիվշինյան ու վրացական ԷՆՄ-ն ընդունակ չեն ինստիտուցիոնալացվելու, առանցքային նշանակություն ունի ոչ միայն այդ երկրներում իրականացվող կուսակցական քաղաքականության տեսակետից, այլև ժողովրդավարացման գործընթացի խափանման առումով, ու հիմք է դառնում ավելի ընդգրկուն հարցադրումների համար. արդյո՞ք դա օրինա-չափություն է ամբողջ հետխորհրդային տրանսֆորմացիայի համար, արդյո՞ք «գունավոր» հեղափոխությունները կարող են նպաստել դրանք իրականացնող երկրների առաջընթացին, կա՞րդյոք նման երկրներում կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացման այլ հնարավորություն և այլն: Սակայն, այդ տեսակետից խնդրին անդրադարձող հրապարակումների եզրակացությունները ևս լավատեսության տեղ չեն թողնում: 2006թ., Վարդերի հեղափոխությունից հետո վրացական կուսակցությունների համար Հանուն բազմակուսակցական ժողովրդավարության ինստիտուտի կազմակերպած աջակցության ծրագրի կապակցությամբ նշվում էր. «Վրաստանում գործնականում կուսակցություններ գոյություն չունեն: Քաղաքական շարժումներն իրականում շատ թե քիչ լոյալ կլաններ են՝ համախմբված առանձին անձերի շուրջ»:²⁴

Պատկերը գրեթե նույնն է Ուկրաինայի պարագայում. «Ուկրաինայում կուսակցությունները անհավանական թույլ են»:²⁵ Նարնջագույն հեղափոխությունից տարիներ անց իրականացված հետազոտությունների արդյունքում արձանագրվում էր. «Ուկրաի-

²⁴ Verheije, Marga, Andre´ Krouwel, Dessy Gavrilova and Theo van Koolwijk. Van partij naar partij: Nederlandse ondersteuning van politieke partijen in Europese landen in transitie. Evaluatie Matra Politieke Partijen Programma 2000–2005. Wormerveer, 2006.

²⁵ D’Anieri Paul, նշվ. աշխ.

նայի կուսակցական համակարգը զարգացած չէ և անկայուն է»²⁶ և «Ուկրաինայի կուսակցությունները դեռևս ունեն այլ նպատակ հետապնդող նախագծերին հատուկ շատ առանձնահատկություններ: Դրանք նախ և առաջ ցանցեր են, որոնք կողմնորոշված են դեպի անձեր և սերտորեն միահիյուսված են իրենց լիդերների տնտեսական շահերի հետ»²⁷:

Իշխանության կուսակցությունները, իսպանարար (spoiler) կուսակցությունները և օլիգարխական կուսակցությունները Վրաստանի և Ուկրաինայի կուսակցական համակարգերի զգալի մասն են կազմում:²⁸ Մասնավորապես, 1990-ական թվականներից մինչ այժմ Վրաստանի կուսակցական համակարգին հատուկ գերիշխող դիրք զբաղեցնող իշխանության կուսակցությունները (Կլոր սեղան-ազատ Վրաստան, Վրաստանի քաղաքացիների միություն, Միավորված ազգային շարժում, Վրացական երագանք) միմյանցից բնույթով չեն տարբերվում, իսկ ընդդիմությունը մնում է խիստ տարանջատված:²⁹

Պարզելու համար, թե ինչու է Ուկրաինայում ու Վրաստանում ժողովրդավարացումը «գունավոր» հեղափոխություններից հետո մտել փակուղի, փորձեր են արվել ուսումնասիրելու պետությունների կայացման գործընթացի նաև ներքին բաղադրիչը՝ կուսակցական քաղաքականությունը: Մասնավորապես, Մեծնակի-Վոզնյակը փորձել է³⁰ գնահատել ուկրաինական Բատկիվշինայի ու վրացական ԷՆՄ-ի ինստիտուցիոնալացման մակարդակները՝ օգտագործելով

²⁶ Slomczynski K. M., Shabad G. and Zielinski J., Fluid Party Systems, Electoral Rules and Accountability of Legislators in Emerging Democracies: The Case of Ukraine. *Party Politics*, 2008, 14, 1, 91–112.

²⁷ Konrad Adenauer Stiftung. *International Parteilienzusammenarbeit der KAS. Globales Engagement fuër Frieden und Demokratie*. Berlin: Konrad Adenauer Stiftung. 2008.

²⁸ Bader M., Party politics in Georgia and Ukraine and the failure of Western assistance, *Democratization*, 2010, 17, 6, December, 1085–1107.

²⁹ Melikidze G., Party System Institutionalization in Post-Soviet Georgia, *Journal of Social Research & Policy*, 2018, 9, 2, December.

³⁰ Mierzejewski-Voznyak, Աշվ. աշխ.

Ռանդալի ու Սվասանդի առաջարկած ինստիտուցիոնալ չափումները³¹, որոնք կազմում են կուսակցության ինստիտուցիոնալացման գնահատման մեկ ինտեգրալ հուսալի գործիք: Մակայն այդ համակարգը, թեև հուսալի, բայց բազմաչափ է, ինչի պատճառով՝ խիստ տեսական, երբեմն՝ ոչ չափելի ու, այդ պատճառով, դժվար կիրառելի: Թոմսան այդ մոդելը որոշ չափով պարզեցրել է ու կիրառել Ինդոնեզիայի կուսակցությունների ուսումնասիրման համար:³² Հենց այդ տարբերակն էլ Մ. Մեթենսկի-Վոզնյակն օգտագործել է ուկրաինական ու վրացական վերոհիշյալ կուսակցությունների ինստիտուցիոնալացման մակարդակը որոշելու համար: Մասնավորապես, Ռանդալի ու Սվասանդի չորս չափումներից (համակարգայնություն, ինքնուրույնություն, նյութականացում, արժեքների ներարկում) առաջինը՝ համակարգայնությունը, դիտարկվում է որպես չորս կոնկրետ ցուցանիշների համախումբ՝ 1. Կուսակցության պատմություն և աշխատակազմ, 2. Լիդերություն, 3. Հովանավորություն և 4. Կուսակցության ֆինանսավորում:

Ստորև անդրադարձ կլինի այդ հետազոտության մի շարք տվյալների ու արդյունքների, որոնք հատկապես հետաքրքիր են այս բաժնի սկզբում նշված «սպասման խմբի» օրինաչափությունների բացահայտման տեսակետից:

Ռանդալի և Սվասանդի չորս չափումներից «արժեքների ներարկման»-ը, որը վերաբերում է կուսակցության գաղափարական հիմքերին և ինքնությանը, քննարկվող կուսակցությունները հիմնականում վերաբերվում են ձևականորեն: Բատկիվչչինսան իր կայքում օգտագործում է բացառապես ուկրաիներենը: Կուսակցության լիդեր Յ. Տիմոշենկոն՝ Նարջագոյն հեղափոխության ժամանակներից սկսած, առավելապես օգտագործում է ուկրաիներենը, թեև մինչև երեսնամյա տարիքը խոսել է միայն ռուսերեն: Չնայած ինքնության ընդգծման այդ ջանքերին, արժեքների ներարկման չափումով Բատկիվչչինսան մնում է թույլ ինստիտուցիոնալացված՝

³¹ **Randall and Svasand** 2002

³² **Tomsa**, 2008

իր ոչ միանշանակ գաղափարական հիմքի պատճառով: Այս կուսակցության ապագան կախված կլինի այն բանից, թե արդյոք կհաջողվի ստեղծել հստակ գաղափարական հիմք:³³

Վրաստանում ԷՆՄ-ի ինքնության դրսևորման ամենացայտուն փորձը եվրոպամետության տեղի-անտեղի ընդգծումն է: Այդուհանդերձ, դա հաճախ մակերեսայնությունից այն կողմ չի անցնում ու իրական արդյունքներ չի տալիս: Ներարկվող արժեքների ակնհայտ հետևանքները կարելի է նկատել տարածքային կորուստների նկատմամբ հասարակության վերաբերմունքի դրսևորումներում: Չնայած Սաակաշվիլու 2008թ. արկածախնդրությունը՝ ռուս-վրացական պատերազմը, էլ ավելի վատթարացրեց իրավիճակը, սակայն հասարակության վերաբերմունքն այդ խնդրին թուլացավ: Եթե 2004թ. տարածքային ամբողջականության ապահովումը որպես գլխավոր խնդիր դիտարկում էին հարցվածների 27 տոկոսը, ապա 2011թ.՝ միայն 16 տոկոսը:³⁴

Վերը բերված փաստերն ու վերլուծությունը վկայում են, որ ոչ Բատկիվշինան, ոչ ԷՆՄ-ն, որոնք իրենց երկրներում տեղի ունեցած «գունավոր» հեղափոխություններում կարևոր դերակատարություն են ունեցել՝ առնվազն որպես դրանց առաջնորդների գլխավոր քաղաքական մեխանիզմներ, ինստիտուցիոնալացման բարձր մակարդակի չեն հասել, հետևաբար երկու երկրներում տեղի ունեցած «գունավոր» հեղափոխությունների արդյունքում չեն ստեղծվել քաղաքական ինստիտուտներ՝ հոչակված նպատակներին հասնելու համար: Իհարկե, տեսականորեն, ինստիտուցիոնալացված կառույցներ կարող էին դառնալ այդ երկրների այլ կուսակցություններ: Հետևաբար, ամբողջական եզրակացությունների համար արժե անդրադառնալ այդ երկրների կուսակցական համակարգերի ընթացքին հետհեղափոխական շրջանում, որոնք անցումային քաղաքական ռեժիմների առանցքն

³³ Նույն տեղում

³⁴ IRI annual Georgian Voter surveys 2004–2011

են³⁵: Բատկիվշինյան գործում է իրական բազմակուսակցական համակարգում, որտեղ մրցակցությունը ծայրահեղ բարձր է, գոյություն ունեն տարածաշրջանային քաղաքական տարածայնություններ, իսկ ֆինանսավորում ստանալը նշանակում է գործընկերություն օլիգարխների հետ: Կուսակցության թույլ ինստիտուցիոնալացումը երկակի վնասաբեր է ուկրաինական ժողովրդավարացմանը: Նախ, կուսակցությունը միշտ չի աշխատում հակահամակարգային դերակատարների չեզոքացման ուղղությամբ, որոնք իրենց շահերը վեր են դասում ժողովրդի շահերից, երկրորդ՝ տատանվող միություններն ու կուսակցական ֆինանսական աջակիցները քաղաքական համակարգում ստեղծում են անկայունություն:

Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա մինչև 2012թ. խորհրդարանական ընտրությունները ԷՆՄ-ն իշխանության կուսակցություն էր: Այդ դիրքը հնարավորություն էր տալիս մենիշխանություն հաստատել պետական ռեսուրսների նկատմամբ, գործել առանց ընդդիմության և վարել հակասական քաղաքականություն, որն ուղղված էր իր այս կամ այն գաղափարական մոտեցումները պաշտպանելուն: Թեև ԷՆՄ-ն վերը նշված մի քանի գործոնների շնորհիվ ինստիտուցիոնալացման ավելի բարձր մակարդակ ունի, քան Բատկիվշինյան, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ այն դեռևս թույլ ինստիտուցիոնալացված է և վտանգներ կան, որ կենթարկվի ապահինստիտուցիոնալացման՝ գերիշխող կուսակցական կարգավիճակը կորցնելու հետևանքով: ԷՆՄ-ն պետք է ստեղծի կայուն կապեր մյուս կազմակերպությունների հետ, ֆինանսական միջոցներ հայթայթի կուսակցական գործունեության համար՝ առանց պետական ռեսուրսների օգտագործման, և ցույց տա, որ

³⁵ **Power, T.**, Parties, Puppets, and Paradoxes: Changing Attitudes toward Party Institutionalization in Post-Authoritarian Brazil. *Party Politics*, 1997, **3**, 2, 189–219.

վրացական կուսակցական համակարգում կարող է գործել ոչ միայն որպես իշխանության կուսակցություն:

Ուկրաինայում և Վրաստանում իրականացված «գունավոր» հեղափոխությունների արդյունքում ստեղծված քաղաքական ռեժիմները լրջորեն տարբերվում են միմյանցից: Ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգերն ունեն կայունության որոշակի մակարդակ: Իր հերթին, կայունությունը հանգեցնում է շարունակական կուսակցական մրցակցության՝ շարունակականությունը որոշվում է որպես հիմնական կուսակցությունների մասնակցություն, որոնք ունեն աջակցության մշտական մակարդակ:³⁶ Ուկրաինայի կուսակցական համակարգն այդ չափումով անբավարար է ինստիտուցիոնալացված, քանի որ բավարար կայուն չէ: Հարյուրավոր կուսակցություններից միայն երկուսը՝ Բատկիվշչինան և ՇԿ-ն են շարունակաբար հաղթահարում ընտրական շեմը և զբաղեցնում խորհրդարանի տեղերի մեծամասնությունը: Կա երրորդ՝ Պյոտր Սիմոնենկոի գլխաված Կոմունիստական կուսակցությունը, որը նույնպես շարունակաբար հաղթահարում է ընտրական շեմը, սակայն 2006 թվականից միջին հաշվով ստանում է ընտրողների ընդհանուր ձայների 8 տոկոսից պակաս և այդ պատճառով կառավարության ձևավորման վրա շատ ավելի փոքր ազդեցություն ունի: Նարնջագույն հեղափոխության ժամանակ Բատկիվշչինայի դաշնակից Վ. Յուշենկոյի «Մեր Ուկրաինան» 2012թ. խորհրդարանական ընտրություններից հետո այլևս խորհրդարանում ներկայացված չէ: Նոր կուսակցություններից մեկը՝ Վ. Կլիչկոյի գլխավորած Ուկրաինական ժողովրդավարական դաշինքը, 2012թ. ընտրությունների արդյունքում ստացած տեղերի թվով երրորդն էր ՇԿ-ից և Բատկիվշչինայից հետո: Այն դեպքում, երբ Բատկիվշչինան և մյուս կուսակցությունների մեծամասնությունն ընդունում էին ընդդիմության մրցակցայնությունը, իշխող ՇԿ-ն մյուս կուսակ-

³⁶ **Mainwaring S.**, Rethinking Party Systems in the Third Wave of Democratization: The Case of Brazil. Stanford: Stanford University Press. 1999.

ցությունների համար ավելի ու ավելի էր դժվարացնում մասնակցությունը կառավարության ձևավորմանը՝ բարձրացնելով ընտրական շեմը, ընտրական համակարգը փոխելով խառը ձևի, բանտ նստեցնելով ընդդիմության ղեկավարներին և օրենքից դուրս հայտարարելով ընտրական դաշինքները:³⁷ Հետագայում, համակարգայնության չափումով Ուկրաինայի կուսակցական համակարգը թույլ ինստիտուցիոնալացված է:

Իրավիճակը Վրաստանում տարբերվում է Ուկրաինայի իրավիճակից: Կուսակցական համակարգը գերինստիտուցիոնալացվածության օրինակ էր 2003թ. Վարդերի հեղափոխությունից հետո և, փաստորեն, իրենից ներկայացնում էր միակուսակցական համակարգ: Սակայն գերինստիտուցիոնալացվածությունը, որպես կանոն, անցողիկ էրևույթ է:³⁸ 2012թ. խորհրդարանական ընտրությունները «Վրացական երազանք» դաշինքի հաղթանակով փլուզեցին Վրաստանի գերկայուն կուսակցական համակարգը: Սակայն, ի տարբերություն նախորդ ընտրությունների, իշխանությունից հեռացած ԷՆՄ-ն քաղաքականությունից չանհետացավ ու որպես ընդդիմություն շարունակում է կարևոր դերակատարություն ունենալ: Վրաստանի կուսակցական համակարգի ապագա կայունությունը հիմնականում կախված կլինի այն բանից, թե արդյոք կկարողանա «Վրացական երազանքը» պահպանել իր դաշինքը: Այն ձևավորել են վեց կուսակցություններ՝ «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստանը», Վրաստանի հանրապետական կուսակցությունը, «Մեր Վրաստանը-ազատ դեմոկրատները», «Ազգային ֆորումը», Վրաստանի

³⁷ **Motyl A.**, Ukrainian Blues. *Foreign Affairs*, 2010, July/August, 125–137.

³⁸ **Schedler**, Under and Overinstitutionalization.” The Helen Kellogg Institute for International Studies.

պահպանողական կուսակցությունը և «Արդյունաբերությունը կփրկի Վրաստանը»: Դաշինքի միավորումն առանց համակարգային չափանիշների ընդգծում է դրա բնորոշ թույլ կողմերը: Դաշինքի որոշ մասնակիցներ արևմտամետ և շուկայամետ են, այն դեպքում, երբ մյուսները օտարատյաց ազգայնամուլներ են, որոնք բացեիքաց դատապարտում են Արևմուտքի հետ հետագա ինտեգրումը: Հանրապետական կուսակցությունը հիմնադրվել է 30 տարի առաջ, մինչդեռ դաշինքի առանցքային կուսակցությունը՝ «Վրացական երազանք-Ժողովրդավարական Վրաստանը», ձևավորվել է 2012թ. իշխանության գալուց ընդամենը մեկ տարի առաջ: Չի բացառվում, որ գերկայունությունը, որը նախկինում բնութագրում էր Վրաստանի կուսակցական համակարգը, կփոխարինվի աճող անկայունությամբ և անորոշությամբ: Կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումը բերում է կուսակցությունների փոխադարձ ճանաչում՝ փոխհարաբերությունների հաստատում և համագործակցություն: Կուսակցություններն ընդդիմությանն ընդունում են որպես օրինական մրցակից և չեն փորձում գերակա դիրք ստանալ կուսակցական համակարգում՝ սահմանափակելով մրցակցությունը: Մինչև վերջերս Վրաստանում գործում էր գերակայություն ունեցող կուսակցական համակարգ և այդ պատճառով ընդդիմությունը գործնականում որևէ դերակատարություն չունեց քաղաքականության ձևավորման հարցում, ինչը հանգեցրեց գերինստիտուցիոնալացման: Թեև ընդդիմադիր կուսակցությունները սահմանափակված չէին մրցակցության առումով, սակայն համակարգը բարենպաստ էր գերակայություն ունեցող կուսակցության համար և դժվարացնում էր կառավարության ձևավորմանը նրանց մասնակցությունը՝ պետական միջոցների և ԶԼՄ-ների մատչելիության մանիպուլյացիայի միջոցով:³⁹ Ներկայումս ԷՆՄ-ի և «Վրացական երազանքի» միջև առկա են անտագոնիստական

³⁹ Mierzejewski-Voznyak, նշվ. աշխ.

հարաբերություններ, սակայն համակեցությունը պարտադրում է որոշ երկխոսություն և նվազագույն համագործակցություն:

Կուսակցությունների և պետության հարաբերություններն ունեն վճռական նշանակություն կուսակցական համակարգի ինստիտուտացիոնալացման համար: Ինստիտուցիոնալացումը պահանջում է ինքնուրույնություն պետության հետ հարաբերություններում, ինչպես նաև ազատություն անհիմն հետապնդումներից ու պետական սուբսիդիաների հավասար մատչելիություն: Այս չափումով Ուկրաինայի կուսակցական համակարգը թույլ ինստիտուցիոնալացված է: Իշխող ուժը պետական իշխանությունն օգտագործում է մյուս քաղաքական գործիչներին հետապնդելու և ընտրական դաշինքներին նախընտրական մրցակցությունից դուրս մղելու համար: Իսկ նախագահ Վ. Յանուկովիչը արտոնություններ էր շնորհում իր կուսակիցներին ու պաշտոններ բաժանում ոչ թե փորձի ու գիտելիքների առկայության հիման վրա, այլ՝ քաղաքական լոյալության:⁴⁰

Կուսակցական համակարգի շարունակականությունն ու կայունությունը էական գործոններ են կուսակցությունների զարգացման համար: Մինչդեռ Ուկրաինայում 2010թ. խորհրդարանական ուժերից միայն Կոմունիստական կուսակցությունն է, որ 10 տարի առաջ նույնպես խորհրդարանում տեղ ուներ: Վրաստանում 2008թ. խորհրդարան անցած կուսակցություններից ոչ մեկը 10 տարի առաջ այնտեղ ներկայացված չէր:⁴¹ Հատկանշական է, որ փոքր վրացական կուսակցությունները, ինչպես նաև նորերը, նույն թերություններն ունեն, ինչ ունեին 1990-ականների կուսակցությունները:⁴²

Ոչ ուկրաինական, ոչ վրացական կուսակցական համակարգերը լեգիտիմություն չեն դրսևորում՝ որպես հասարակության իրական աջակցությունը վայելող ինստիտուտներ: Ուկրաինական

⁴⁰ **Motyl A.**, նշվ. աշխ.

⁴¹ **Bader M.**, նշվ. աշխ.

⁴² **Dolidze V.**, Political Parties and Party Development in Georgia. *Central Asia and the Caucasus*, 2005, 2, 49–59.

անբավարար ինստիտուցիոնալացված կուսակցական համակարգը անկայուն է, կուսակցությունները փոխադարձ հարգանք չեն դրսևորում, իսկ հասարակությունը չի հավատում նրանց գործունեությանը:

Սաակաշվիլու նախագահության ընթացքում իշխանության կենտրոնացումը Վրաստանի ղեկավարի ձեռքբերում և հակակշիռների ու զսպումների համակարգի բացակայությունը փաստորեն ստեղծել էին միակուսակցական համակարգ: Սաակաշվիլին ստեղծել էր սեփական քաղաքական մեքենան, որը գտել էր առանց արտաքին միջամտության գործելու հնարավորություն: Նա ազդում էր համալսարանների, սպորտային կազմակերպությունների ու արհմիությունների ղեկավարների ընտրության վրա, ստեղծել էր պետական կառավարման ոլորտի աշխատողների լոյալությունն ապահովող համակարգ:⁴³ Վրաստանում գերիինստիտուցիոնալացված կուսակցական համակարգը գերկայուն է, ինչը հանգեցնում է ընդդիմադիր կուսակցությունների մարզինալացմանը, պետական իշխանության ու իշխող կուսակցության ռեսուրսների կոռուպցիային: Դրա հիմնական պատճառներից մեկն այն է, որ 1990-ական թվականներից մինչ այժմ Վրաստանի կուսակցական համակարգին հատուկ է գերիշխող կուսակցության առկայություն (հաջորդաբար՝ Կլոբ սեղան-ազատ Վրաստան, Վրաստանի քաղաքացիների միություն, Միավորված ազգային շարժում, Վրացական երազանք) և խիստ տարանջատված ընդդիմություն: Հատկանշական է, որ Մոլդովայում ու Հայաստանում (որոշ ժամանակահատվածներում՝ նաև Բալթյան երկրներում) ևս կուսակցական համակարգերը մեկ գերիշխող կուսակցությունով են, իսկ մյուս կուսակցությունները, հիմնականում, կլիենտելիստական դերակատարություն ունեն: Սակայն ընդհանրությունները դրանով չեն սահմանափակվում: Կոռուպցիա, գաղափարական հիմքի բացակայություն և

⁴³ **Muskhelishvili, M., and G. Jorjoliani**, *Georgia's Ongoing Struggle for a Better Future Continued: Democracy Promotion Through Civil Society Development. Democratization*, 2009, **16**, 4, 682–708.

քաղաքական մասնատվածություն՝ սրանք են Մոլդովայի կուսակցական համակարգի հիմնական խնդիրները⁴⁴, որոնք գրեթե նույնությամբ կրկնում են Վրաստանի խնդիրները:

Կլիենտելիստական հարաբերությունների ու կոռուպցիայի հետ կապված խնդիրները հաճախ ծագում են իշխանությունների (իշխող քաղաքական ուժի) և գործարարների գործակցության առնչությամբ: ԽՍՀՄ փլուզուման արդյունքում ձևավորված նորանկախ պետություններում քաղաքական և գործարար էլիտայի հարաբերությունները ներկայացնող սոցիալական կառուցվածքը բացատրելու համար օգտագործվում է կլիենտելիստական մոդելի տարատեսակը՝ կլանային քաղաքականությունը⁴⁵: Այն հիմնվում է ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած ռեսուրսները փոքր թվով մարդկանց ձեռքում կենտրոնացման հիման վրա ձևավորված օլիգարխական հասարակությունների բնույթի վրա, որտեղ օլիգարխական կլաններն ունեն մեծ ազդեցություն քաղաքական և տնտեսական գործընթացների վրա: Ակնհայտ է, որ դրանով նրանք էական բացասական ազդեցության հնարավորություն են ունենում ինստիտուցիոնալացման և կուսակցական քաղաքականության գործընթացների վրա:⁴⁶ Մասնավորապես, կլանները կուսակցությունների աջակցության համեմատաբար ոչ հուսալի և ոչ երկարաժամկետ աղբյուրներ են,

⁴⁴ **Berglund C.**, Georgia. *S. Berglund, J. Ekman, K. Deegan-Krause & T. Knutsen (Eds.), The Handbook of Political Change in Eastern Europe*, pp. 777-821. UK: Edward Elgar Publishing Limited. 2013.

⁴⁵ **Kuzio T.**, նշվ. աշխ.; **Sidikov B.**, New or Traditional? ‘Clans’, Regional Groupings, and State in Post-Soviet Azerbaijan. *Berliner Osteuropa Info*, 2004, 21, 68–74; **Wedel J. R.**, Clans, Cliques and Captured States: Rethinking ‘Transition’ in Central and Eastern Europe and the Former Soviet Union. *Journal of International Development*, 2003, 15, 427–440. **Way L.**, Rapacious Individualism and Political Competition in Ukraine, 1992–2004. *Communist and Post-Communist Studies* 2005, 38 (2): 191–205; **Melnykovska I., and R. Schweickert**, Who You Gonna Call? – Oligarchic Clans as a Bottom-Up Force of Neighborhood Europeanization in Ukraine. Berlin, Germany: Arbeitspapiere des Osteuropa-Instituts Der Freien Universität Berlin, Germany. 2008. http://www.oei.fu-berlin.de/politik/publikationen/AP_67.pdf

⁴⁶ **Melnykovska I., and R. Schweickert.**, նշվ. աշխ.

ինչը քայքայում է կուսակցական համախմբվածությունը, որի ցայտուն օրինակ է Ուկրաինայի դեպքը:⁴⁷ Այնտեղ օլիգարխական կլաններն օգտագործում են կուսակցական համակարգի հատվածականությունը՝ տարբեր կուսակցությունների միջոցով նախ խորհրդարան, ապա նաև կառավարություն թափանցելու համար՝ բիզնեսում իրենց հնարավորությունները մեծացնելու նպատակով: Ակնհայտ է, որ կլանների շահերը հակոտնյա են կուսակցությունների ինքնուրույնությանն ու ինստի-տուցիոնալացմանը, քանի որ առաջինները, որպես ոչ ֆորմալ կառույցներ, կարող են արդյունավետ գործել թույլ և կախյալ ֆորմալ կառույցների՝ կուսակցությունների առկայության պայմաններում, որոնց լիազորությունները ոչ ֆորմալ մեխանիզմներով փորձում են յուրացնել: Հովանավորչական համակարգի և ոչ ֆորմալ խմբերի զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կուսակցական գործունեությունը պահանջում է ֆինանսական միջոցներ, իսկ դրանց ծագումն այս կամ այն չափով թելադրում է կուսակցության քաղաքականությունն ու դրա նպատակային ուղղվածությունը: Կուսակցության կառուցվածքային կայացումը պահանջում է կայուն ռեսուրսներ, որոնք թույլ կտան հաջողությամբ իրականացնել ընթացիկ գործունեությունն ու նախընտրական քարոզչությունը: Ակնհայտ է, որ հետխորհրդային տրանսֆորմացիայի երկրներում կուսակցական անդամավճարները և նվիրատվությունները չեն կարող բավարար լինել այդ նպատակների համար: Իհարկե, կա նաև պետական ֆինանսական աջակցությունը կուսակցություններին, սակայն հարկ է հաշվի առնել, որ հետխորհրդային երկրներում այդ մեխանիզմը հաճախ կառավարության համար դառնում է գործիք ոչ իշխանական կուսակցություններին «սանձելու» համար: Մասնավորապես, Ուկրաինայի կուսակցությունները պետական ֆինանսավորում ստանում են միայն անուղղակիորեն: Որոշ ընտրությունների արդյունքում, օրինակ 2006թ., փոխհատուցվում էին փաստացի ընտրական

⁴⁷ **Way L.**, Rapacious Individualism and Political Competition in Ukraine, 1992–2004. *Communist and Post-Communist Studies*, 2005, 38 (2): 191–205.

ծախսերը, մինչդեռ այլ դեպքերում անգամ փոխհատուցումներ չեն եղել, քանի որ պետական բյուջեի մասին օրենքները նման բան չեն նախատեսել, ինչպես 2007թ.⁴⁸ Հետևաբար, կարծես թե ստացվում է փակ շղթա. կուսակցությունների արդյունավետ մրցակցության և ինստի-տուցիոնալացման համար անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ, սակայն, երբ դրանք գալիս են կլաններից ու օլիգարխներից, խոչընդոտում են կուսակցության կառուցվածքային զարգացմանը, կուսակցությունը մնում է թույլ և անկայուն, կախված օլիգարխների հետաքրքրություններից: Իսկ երբ կուսակցությունը կորցնում է դիրքերը խորհրդարանում, կտրուկ նվազում են այդ հետաքրքրությունները:

Այսպիսով, թեև Ուկրաինայի կուսակցական համակարգի այլ ներկայացուցիչների համեմատ Բատկիվշինան լավ կազմակերպված է, սակայն վերոհիշյալ պատճառներով թույլ ինստիտուցիոնալացում է դրսևորում համակարգայնության չափումով:⁴⁹

Չնայած հեղափոխությունից հետո Վրաստանի կուսակցական համակարգի ընթացքը և արդյունքները նույնպես լավատեսություն չեն ներշնչում, սակայն դրանք ունեն մի շարք էական տարբերություններ ուկրաինականի նկատմամբ: Քանի որ պետական իշխանությունը Վրաստանում հիմնականում կենտրոնացված է գործադիրում, հեղափոխության միջոցով իշխանության եկած Մաակաշվիլին ղեկավարում էր Վրաստանն ու ԷՆՄ-ն՝ չվախենալով, որ իր իշխանությունը կարող է սահմանափակել խորհրդարանի մեծամասնությունը: Նա անձամբ էր կազմում կուսակցության ընտրական ցուցակը՝ ապահովելով իր նկատմամբ բացարձակ կուսակցական լոյալություն և կառավարելիություն:⁵⁰

Հեղափոխությունից հետո Մաակաշվիլու ԷՆՄ-ն փոխարինեց Շևարդնաձեի Վրաստանի քաղաքացիների միությանը՝ որպես

⁴⁸ **Kovryzhenko D.**, Regulation of Political Parties in Ukraine: The Current State and Direction of Reforms. Kyiv: Agency for Legislative Initiatives, OSCE/ODIHR. 2010.

⁴⁹ **Mierzejewski-Voznyak**, Նշվ. աշխ.

⁵⁰ **Mitchell, L. A.**, Democracy in Georgia since the Rose Revolution. *Orbis*, 2006, 50, 4, 669–676.

իշխանության կուսակցություն: 2008թ. խորհրդարանական ընտրությունների կանոնները փոխվեցին՝ ի նպաստ իշխող կուսակցության, և ԷՆՄ-ին բաժին հասավ խորհրդարանի տեղերի 80 տոկոսն ու պետական միջոցների ավելի մեծ մատչելիություն:⁵¹

Կոռուպցիայի վերացման Սաակաշվիլու անձնական նախագիծը ԷՆՄ-ի գլխավոր առաջնահերթությունն էր և կուսակցությունը զբաղվեց նախկին պետական պաշտոնյաների ու գործարարների ձերբակալությամբ ու բանտարկությամբ, որոնք մինչ վարդերի հեղափոխությունը հովանավորչական համակարգի մաս են եղել: Վրաստանը, փաստորեն, ազատվեց կլիենտելիզմից, բայց միջոցները, որոնց կիրառմամբ ԷՆՄ-ն հասավ դրան, պատճառ դարձան իրենց քննադատության համար: Հնչեղ անուններ ունեցողներ են ձերբակալվել, բանտարկվել առանց նրանց դեմ որևէ ապացույց ներկայացնելու՝ ստիպելով վճարել համաձայնեցված գումարներ կառավարությանը կամ փոխանցել մասնավոր ընկերություններում ունեցած իրենց մասնաբաժինները: Այդ մարդկանց մեծ մասն այդպես էլ դատարանի առաջ չկանգնեց և/կամ չհամաձայնեց իրեն առաջադրված մեղադրանքն ընդունել՝ զնալով գործարքի: 2004թ. Սաակաշվիլու կառավարությունը նախնական կալանքի պահանջ է ներկայացրել 1540 ձերբակալվածի համար, որոնցից շատերը չէին կարող ազատագրվել, սակայն դատական իշխանությունը դեպքերի 83 տոկոսի համար համաձայնություն է տվել:⁵² Սաակաշվիլին օգտագործեց իր ձեռք բերած պետական իշխանությունը՝ նրանցից գումարներ կորզելու համար:⁵³ Ութ տարի որոշումների ընդունումը գտնվում էր բացառապես կուսակցական ղեկավարության ձեռքերում, այդ պատճառով ԷՆՄ-ն կարելի էր համարել ինստիտուցիանալացված՝ որոշումների ընդունման

⁵¹ OSCE/ODIHR Election Observation Mission Final Report (2009).

http://www.osce.org/documents/odhr/2008/09/32898_en.pdf (accessed December 19, 2009).

⁵² **Areshidze I.**, *Democracy and Autocracy in Eurasia*. East Lansing: Michigan State University Press, 2007, p. 213

⁵³ **Areshidze, I.**, Աշվ. աշխ., pp. 212-216.

ինքնուրույնության չափումով: Սակայն այն գործում էր կուսակցական համակարգում գերակա դիրքի պայմաններում:

ԷՆՄ-ն կարողացավ աշխատել առանց հովանավորչական-կլիենտելիստական հարաբերությունների, սակայն կարելի է վիճել՝ արդյո՞ք այն վերացրել է կոռուպցիան Վրաստանում, թե՞ պարզապես կենտրոնացրել է կոռուպցիայի համակարգի վերահսկողությունը:⁵⁴ Մարտավարությունը, որն օգտագործվել է վրացական քաղաքականությունը կլիենտելիզմից ազատելու համար, կոշտ քննադատության է արժանանում, քանի որ այն ոտնահարում էր մարդու իրավունքները, անտեսում պատշաճ իրավական ընթացակարգերը և կասկածի տակ էր դնում անգամ այն, թե արդյոք ԷՆՄ-ն գործել է ժողովրդավարական նորմերով:⁵⁵ Կլիենտելիզմը վնասներ է հասցնում համակարգայնության մակարդակին և, հետևաբար, կուսակցության ինստիտուցիոնալացմանը, սակայն ուժեղ, անկախ կազմակերպական կառուցվածքը չի երաշխավորում, որ կուսակցությունը կգործի ժողովրդավարական մեթոդներով: ԷՆՄ-ն ֆինանսավորման տեսակետից արտոնյալ դիրք է ունեցել Վրաստանի կուսակցական համակարգում: Այն եղել է իշխանության կուսակցություն և մինչև 2012թ. խորհրդարանական ընտրությունները լիովին տնօրինել է օրենսդիր մարմնի գործունեությունը, ունեցել է ընտրական արտոնություն: Սակայն, այն բանից հետո, երբ 2012թ. ԷՆՄ-ն դարձավ ընդդիմության մաս, անհրաժեշտ կապիտալի ներգրավումը պահանջում է նոր ռազմավարություն և ստիպված փոխզիջումներ քաղաքականության մշակման հարցում: Ընդհանուր առմամբ, համակարգայնության չափումով ԷՆՄ-ն թույլ ինստիտուցիոնալացված է: Իշխանության կուսակցության նախկին կարգավիճակը ստեղծել է կուսակցական ենթակառուցվածք, որն այլևս կենսունակ չէ: Ուժեղ առաջնորդությունը, առանց օլիգարխական աջակցության գործելու կարողությունը և ֆինանսական

⁵⁴ Stefes, C., Governance, the State, and Systemic Corruption: Armenia and Georgia in Comparison. *Caucasian Review of International Affairs*, 2008, 2, 2, 73–83.

⁵⁵ Mierzejewski-Voznyak, Նշվ. աշխ.

ինքնուրույնությունը ոչ թե հետևանք էին ինստիտուցիոնալացման, այլ 2004-2012 թթ. գերակա դիրք ունենալու արդյունք էին:

Բիզնեսի ու քաղաքականության փոխկապակցվածությունը կարող է վտանգել ցանկացած կուսակցության ինքնուրույնությունը՝ կուսակցական համակարգերի գնահատման Ռանդալի և Մվասանդի չորս չափումներից ևս մեկը: Դա, որպես կանոն, տեղի է ունենում, երբ օլիգարխները, որոնք ֆինանսավորում են կուսակցություններ, միաժամանակ կուսակցության անդամներ են և հաճախ դառնում են պատգամավորներ: Սակայն նրանք կուսակցության հետ են, քանի դեռ կուսակցությունը ներկայացնում է իրենց շահերը: Գումարները, որոնք ներդնում են այդ գործարարները կուսակցությունում, նրանց համար ապահովում են բարենպաստ որոշումներ: Կուսակցությունների պետական ֆինանսավորման պետական բացակայությունն ու անդամավճարների անբավարար հնարավորությունները կուսակցական կառույցի համար այլընտրանքներ չեն թողնում, քան կապերը խոշոր բիզնեսի հետ, ինչն ինքնին թուլացնում է կուսակցությունը: Իհարկե, կա նաև ֆինանսական աջակցության միջազգային հնարավորությունը, որը դրսևորվում է երկու ուղղությամբ՝ ուղղակի, որպես աջակցություն կուսակցությունների կայացման գործընթացին և անուղղակի, որպես պետական կառավարման համակարգի բարձր աշխատավարձային ֆոնդի ապահովում: Ակնհայտ է, որ երկրորդ դեպքում գործնականում հնարավոր չէ խուսափել արտաքին ազդեցություններից, ինչը ինստիտուցիոնալացման չորս կարևոր չափումներից մեկի՝ որոշումների ընդունման ժամանակ ինքնուրույնության ապահովման լուրջ խախտում է: Թեև նման վտանգներն ավելի փոքր են առաջին դեպքում, սակայն, թերևս, պատահական չէ, որ անցած ժամանակահատվածում հետխորհրդային տարածքում արտաքին ֆինանսական աջակցություն ստացած Ուկրաինայի և Վրաստանի կուսակցությունները լիովին ձախողվել են, ինչի պատճառները կներկայացվեն ստորև:

Վրաստանի և Ուկրաինայի կուսակցությունների ինստիտուցիոնալացման արտաքին ֆինանսական աջակցությունը

Կուսակցությունների ու կուսակցական համակարգերի առանձնահատուկ նշանակությունը ժողովրդավարացման գործընթացի հաջողության համար ևս մեկ անգամ ընդգծում է այն փաստը, որ Արևմուտքը ժողովրդավարացման գործընթացի աջակցության շրջանակներում իրականացրել է կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացմանն ուղղված հատուկ ծրագրեր: Ակնհայտ է, որ թեև ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո բոլոր հետկոմունիստական նորանկախ երկրները հայտնվել էին նույն վիճակում՝ փլուզվել էին բոլոր համակարգերը՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտակրթական և այլն, չկար գիտելիք ու փորձ՝ այլ սկզբունքների հիման վրա դրանք կառուցելու համար, սակայն, կարճ ժամանակ անց պարզ դարձավ, որ ժողովրդավարացման գործընթացը հնարավոր է հաջողություն ունենա բալթյան երկրներում, Ուկրաինայում, Մոլդովայում, Վրաստանում, Հայաստանում, շատ ավելի քիչ հավանականությամբ՝ Ղրղզստանում:⁵⁶ 1990-ականների սկզբից կանոնավոր հատկացվող ֆինանսական աջակցությունը Վրաստանի մի քանի կուսակցությունների տրամադրել են Ազգային ժողովրդավարական ինստիտուտը (National Democratic Institute (NDI)) և Միջազգային հանրապետական ինստիտուտը (International Republican Institute (IRI)), որոնց ֆինանսավորել է Միջազգային զարգացման ամերիկյան գործակալությունը (ernational Development (USAID)), ինչպես նաև Բազմակուսակցական ժողովրդավարության նիդեռլանդական ինստիտուտը (Netherlands Institute for Multiparty Democracy (NIMD))՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների բյուրոյի (Office for Democratic Institutions and Human Rights (ODIHR) of OSCE) ֆինանսական աջակցությամբ: Վերջինի

⁵⁶ Bader M., նշվ. աշխ.; Թորոսյան S., Հասարակական..., նշվ. աշխ; Թորոսյան S., Սուրբասյան Հ., նշվ. աշխ.

ծրագիրը Վրաստանում իրականացվել է 2005-2008 թվականներին: Ուկրաինայում նույնպես կուսակցական համակարգերի աջակցության ծրագրեր են իրականացրել նշված ամերիկյան կազմակերպությունները, ինչպես նաև գերմանական երկու՝ Կոնրադ Ադենաուերի (Konrad Adenauer Stiftung) և Ֆրիդրիխ Էբերտի (Friedrich Ebert Stiftung) հիմնադրամները:

Ֆինանսական օգնություն տրամադրած կազմակերպությունների հրապարակումները վկայում են, որ իրենց նպատակը հիմնականում եղել է աջակցությունը կայուն, ներկայացուցչական և ժողովրդավարական կուսակցությունների ձևավորմանը:⁵⁷

Վրաստանում օգնություն ստացել են երկու իշխող կուսակցություններ՝ Է. Շևարդնաձեի Վրաստանի քաղաքացիների միությունը և Մ. Սասկաշվիլու Միացյալ ազգային շարժումը, ինչպես նաև մի քանի տասնյակ փոքր և վատ կազմակերպված կուսակցություններ, իսկ Ուկրաինայում՝ Վ. Յուշչենկոյի «Մեր Ուկրաինան», Վ. Յանուկովիչի «Շրջանների կուսակցությունը» և Յ. Տիմոշենկոյի «Յուլիա Տիմոշենկոյի դաշինքը», ինչպես նաև մեծ թվով ոչ ազդեցիկ քաղաքական ուժեր: Այդուհանդերձ, ֆինանսական աջակցությունը Վրաստանի և Ուկրաինայի կուսակցություններին չօգնեց, որ այդ կուսակցությունները դառնան նկատելիորեն ավելի ժողովրդավարական, ավելի կայուն և ավելի ներկայացուցչական:⁵⁸ Դեռևս 2001թ. փորձագետները, գնահատելով այդ աջակցության արդյունավետությունը, նշում էին, որ այդ երկրների «հիմնական կուսակցություններում սահմանափակ հետաքրքրություն կա լավ ինստիտուցիոնալացված ժողովրդավարական կազմակերպություն-

⁵⁷ Netherlands Institute for Multiparty Democracy. A Framework for Democratic Party-Building. The Hague: Netherlands Institute for Multiparty Democracy, 2004; United States Agency for International Development, Political Party Development Assistance. 1999; United States Agency for International Development, USAID Political Party Assistance Policy. 2003. United States Agency for International Development. A Study of Political Party Assistance in Eastern Europe and Eurasia. Washington, DC: USAID, 2007. Konrad Adenauer Stiftung. International Parteilienzusammenarbeit der KAS. Globales Engagement für Frieden und Demokratie. Berlin: Konrad Adenauer Stiftung. 2008.

⁵⁸ Նույն տեղում

ներ դառնալու նկատմամբ, ... սահմանափակ քաղաքական կամք՝ բազմաթիվ ինստիտուցիոնալ թերությունները հաղթահարելու համար»:⁵⁹ 2007թ. իրականացված մեկ այլ հետազոտություն հաստատում է, որ նման մռայլ պատկեր է նաև Ղրղզստանում:⁶⁰ Հայաստանի վերաբերյալ հետազոտությունն արձանագրել է, որ «Հայաստանում քաղաքական իրավիճակը չի նպաստում կուսակցությունների ձևավորմանը... աջակցությունը կուսակցություններին աննշան ազդեցություն է ունեցել: Կուսակցությունների ներկայացուցիչները նշել են, որ օգնությունը լավ նպատակադրում ունի, բայց համապատասխանում է ավելի ժողովրդավարական համատեքստի»:⁶¹

Մ. Բադերը կարծում է, որ կուսակցական ֆինանսական աջակցությունը կարող է ունենալ լուրջ ազդեցություն, եթե կուսակցությունների զարգացման տեղական պայմանները ազատվեն երեք հիմնական թերություններից. «առաջին, ասպարեզի աղավաղումներ, որոնք առաջանում են, երբ վարչակազմը աջակցում է որոշ կուսակցությունների, որպեսզի նրանց համար լայնորեն մատչելի դառնան պետական միջոցները, ինչպես Մասկաշվիլու օրոք էր, երբ վարչակազմի հովանավորությունը վայելող կուսակցությունները դարձել էին այլընտրանքային կուսակցությունների զարգացմանը խոչընդոտող ուժեր: Երկրորդ, իրավիճակը, երբ կուսակցությունները ազդեցիկ կազմակերպություններ չեն որոշ, հատկապես, գործադիր-օրենսդիր հարաբերություններին և ընտրական օրենսդրությանն առնչվող ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայության պատճառով, ինչը մեծացնում է կուսակցությունների՝ անկայուն ուժերի վերածվելու և հաջորդ ընտրություններին փոխարինվելու հավանականությունը: Երրորդ, չափազանց կոշտ, վերևից-ներքև

⁵⁹ Black David, Susan Jay, and Michael Keshishian. USAID/Caucasus/Georgia Civil Society Assessment. Burlington, VT. 2001.

⁶⁰ United States Agency for International Development. A Study of Political Party Assistance in Eastern Europe and Eurasia. Washington, DC: USAID. 2007.

⁶¹ Nelson Sue, and Brian Katulis. Armenia Political Party Assessment. Washington, DC: United States Agency for International Development. 2005.

ղեկավարի լիակատար թելադրանքով կուսակցություններ, որոնցում չափազանց ցածր է որևէ նշանակալի բարեփոխման իրականացման հավանականությունը»:⁶²

Սակայն ծրագրերի ձախողման պատճառները միայն դրանում ընդգրկված կուսակցությունների ու երկրների հետխորհրդային հետազոծով չի պայմանավորված: Ենթադրվում է⁶³, որ քննարկվող ծրագրերում չպետք է ներգրավվեին այն կուսակցությունները, որոնք ստեղծվել են ոչ ժողովրդավարական վարչակարգի աջակցության նպատակով և այն կուսակցությունները, որոնք թվում են «եթերային նախագծեր» և որոնց «սեփականատերն» է կուսակցության ղեկավարը, սակայն Մ. Բադերը պնդում է, որ Ուկրաինայում և Վրաստանում ծրագրերի շահառուների ընտրության ժամանակ այդ պահանջները հաճախ հաշվի չեն առնվել: Նա նաև կարծում է, որ թեև այդ երկրներում ծրագրերը որևէ նկատելի արդյունք չեն տվել, դրանք չեն դադարեցվել կամ կտրուկ փոփոխությունների չեն ենթարկվել՝ բացասական գնահատականներ պարունակող զեկույցների հիման վրա, ինչը վկայում է, որ ծրագրերը մանրակրկիտ չեն ուսումնասիրվել ու աջակցություն տրամադրողները պատասխանատվություն չեն կրել դրանց անարդյունավետության համար (NIMD ծրագիրը դադարեցվել է ֆինանսական միջոցներ տրամադրող կողմի առաջնահերթությունների վերանայման պատճառով), մինչդեռ ծրագրերի կատարման ընթացքում Վրաստանի և Ուկրաինայի կուսակցական համակարգերի «ազնիվ և հիմնավոր գնահատումը» հնարավորություն կտար կամ կանխել ոչ համապատասխան կուսակցությունների ընտրությունը կամ հովանավորներին համոզել դադարեցնել ֆինանսավորումը՝ մինչև համապատասխան կուսակցությունների ու պայմանների ձևավորումը⁶⁴: Այսպիսով, Ուկրաինայի ու Վրաստանի կուսակցությունների աջակցության ծրագրերի ձախողված փորձի ուսումնասիրությունը

⁶² Bader M., նշվ. աշխ.

⁶³ Նույն տեղում

⁶⁴ Նույն տեղում

հնարավորություն է տալիս ոչ միայն պարզել անհաջողության պատճառները, այլև ուրվագծել այն գործոնները, որոնց առկայությունը մեծապես կպայմանավորի հետագայում նման նոր ծրագրի հաջողությունը՝

- Կուսակցությունների ընտրությունը պետք է կատարվի դրանց ներկայացրած ծրագրերի հիման վրա, որոնց գնահատման և իրականացման գործընթացում պետք է ներգրավվեն նաև տեղական մասնագիտական կազմակերպություններ, քանի որ արևմտյան կազմակերպությունների փորձը հնարավորություն չի տալիս լիարժեքորեն ընկալել հետկոմունիստական տարածքում կատարվող գործընթացներն ու առկա իրողությունները: Գործընթացը պետք է իրականացվի հրապարակային և թափանցիկ մրցույթի միջոցով:
- Ծրագրերում կուսակցությունների ընդգրկման համար պետք է գնահատվի ինչպես ծրագրի մասնագիտական հիմնավորվածությունն, այնպես էլ հավակնորդ կուսակցության՝ նման ծրագրի իրականացման կարողությունը, ըստ անցած ճանապարհի, ռեսուրսների, համակարգում զբաղեցրած դիրքի և այլն:
- Ծրագիրը պետք է սահմանի կոնկրետ և, ցանկալի է, չափելի նպատակներ և դրանց իրագործմանն ուղղված քայլեր ու միջոցառումներ:
- Ծրագրի արդյունավետության ապահովման նպատակով ֆինանսական աջակցություն պետք է տրամադրվի այն խնդիրների լուծման համար, որոնք բխում են տվյալ կուսակցության ինստիտուցիոնալացման կարիքներից:
- Ծրագրի կատարման ընթացքում պետք է նախատեսվեն միջանկյալ հաշվետվություններ, որոնք հնարավորություն կտան ընթացքում գնահատել ծրագրի արդյունավետությունը և հետագա ընթացքի ճշգրտումներ անել:

Կուսակցությունների ու կուսակցական համակարգերի հետազոտության որակական և քանակական գնահատման մոդելներն ու գործիքակազմերը, ինչպես նաև դրանց կիրառման դեպքերը հնարավորություն են տալիս արձանագրելու, որ ձևավորվել են կուսակցությունների ու կուսակցական համակարգերի արդյունավետությունը կամ ինստիտուցիոնալացման մակարդակն ու ժողովրդավարացման գործընթացի վրա դրա ազդեցությունը որոշելու բավական մշակված մեխանիզմներ: Սակայն ակնհայտ է, որ յուրաքանչյուր գնահատման կամ ախտորոշման վերջնական նպատակը դրա արդյունքում բացահայտված խնդիրների լուծումն է: Այդ առումով գրեթե բոլոր հետազոտողներն արձանագրում են, որ կուսակցությունների ինստիտուցիոնալացումը զգալիորեն տարբեր-վում է կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացումից: Մասնավորապես, Ռանդալը և Սվասանդն արձանագրում են, որ եթե կուսակցությունների ինստիտուցիոնալացումը, որն այդ կազմակերպությունների ամրապնդումն է, նպաստում է կուսակցական համակարգի ինստիտուցիոնալացմանը, ապա հակառակ պնդումը միշտ չէ, որ ճիշտ է. կան կուսակցությունների համար արտաքին բնույթի մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են կուսակցական մրցակցության հավասար պայմանների ստեղծմանը:⁶⁵ Կուսակցությունների ինստիտուցիոնալացումը վճռական նշանակություն ունի ժողովրդավարական վարչակարգի կայացման համար, քանի որ կայունություն և լեգիտիմություն է հաղորդում քաղաքական համակարգին:⁶⁶ Պատահական չէ, որ, ընդգծելով պետության մեջ ինստիտուտ հասկացողության լայն կիրառումը, Ա. Շեդլերն արձանագրում է, որ երբ խոսքը վերաբերում է կայացմանը, հենց կուսակցական համակարգն է առավել

⁶⁵ **Randall V. and Svåsand L.**, Party Institutionalization in New Democracies, *Party Politics*, 2002, **8**, 1, 5-29.

⁶⁶ **Meleshevich A.**, Party Systems in Post-Soviet Countries: A Comparative Study of Political Institutionalization in the Baltic States, Russia, and Ukraine. New York: Palgrave Macmillan. 2007.

քննարկվողը:⁶⁷ Ե. Շատշնեյդերը դեռևս 1942թ. նշում էր. «կուսակցությունները ստեղծեցին ժողովրդավարությունը, իսկ ժամանակակից ժողովրդավարությունը անիմաստ է, եթե չի դիտարկվում կուսակցությունների տեսակետից»⁶⁸: Ըստ Հանթինգթոնի, երրորդ ալիքի ժողովրդավարություններին սպառնում են ոչ թե հակաժողովրդավարական գեներալները, այլ այն մարդիկ, ովքեր ունեն ընտրությունների միջոցով իշխանության զավթման ներուժ, դրանից հետո «ժողովրդավարության մեխանիզմով» աճյարարություններ են անում կամ քանդում են ներսից⁶⁹, ինչը հնարավոր է թույլ ինստիտուցիոնալացված կուսակցությունների դեպքում: Ժողովրդավարության կայացման համար ինստիտուցիոնալացված կուսակցությունները և կուսակցական համակարգերը անհրաժեշտ են այնտեղ, որտեղ ժողովրդավարական սուբյեկտները պատասխանատվություն են կրում և առաջ են մղում ժողովրդավարությունը: Մինչդեռ, ոչ սահմանադրական համակարգերում կուսակցությունները նման նպատակներ չունեն և ոչ թե քաղաքական համայնքներ են, այլ գործիքներ քաղաքական գործիչների ձեռքին, որոնք դրանք զլիավորում են:⁷⁰

Ինչպես նշում է Դ. Թոմսան⁷¹, կուսակցությունների արդյունավետությունն ու կառուցվածքը անմիջականորեն ազդում են ժողովրդավարության կայացման հեռանկարների վրա: Այն երկրներում, որտեղ կուսակցությունները և կուսակցական համակարգերը թույլ ինստիտուցիոնալացված են, ժողովրդավարության կայացումն անհասանելի է: Վերջինի համար պետք են ինստիտուցիոնալացված կուսակցություններ, քանի որ դրանք հասարակությունը սոցիալականացնում են ժողովրդավարական ուղիների ընտրության համար: Հետևաբար կարևոր է ոչ միայն

⁶⁷ Schedler A., նշվ. աշխ.

⁶⁸ Schattschneider E. E., Party Government. New York: Farrar and Rinehart. 2007.

⁶⁹ Huntington S. P., The Clash of Civilizations and the Remaking of World Order. London: Simon & Schuster. 1996.

⁷⁰ Schedler A., նշվ. աշխ.

⁷¹ Tomsa 2008, նշվ. աշխ.16.

գնահատել կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ինստիտուցիոնալացումը՝ դրանց վիճակի մասին պատկերացում կազմելու համար, այլև ունենալ կուսակցությունների ինստիտուցիոնալացման հարացույց, որը հնարավորություն կտա բարելավել այդ վիճակը ինչպես առանձին կուսակցություններում, այնպես էլ՝ որպես հետևանք, կուսակցական համակարգերում:

Ակնհայտ է, որ նման հետազոտությունները հատկապես կարևոր են հետկոմունիստական երկրների համար, որոնք ինստիտուցիոնալացման առումով կազմում են առանձին դաս, քանի որ այդ երկրներում տեղի ունեցող գործընթացներն ունեն ընդգծված առանձնահատկություններ⁷²: Հետխորհրդային երկրներից, ինչպես արդեն նշվել է, ժողովրդավարացման հեռանկարների տեսակետից, հատկապես հետաքրքիր են Վրաստանի, Ուկրաինայի, Մոլդովայի և Հայաստանի դեպքերը, որոնք երբեմն՝ որոշ խնդիրներ ուսումնասիրելիս, դիտարկվում են Արևելյան ու Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ: Քանի որ այդ հետազոտությունները հաճախ ընդգրկում են հետազոտության տարբեր ուղղություններ՝ կուսակցությունների տեսակներ, կուսակցությունների գործունեության կապը պետության կայացման հետ, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի գնահատման մոդելներ և չափանիշներ, կուսակցությունների ինստիտուցիոնալացում, կուսակցական համակարգ և քաղաքական տարանջատումներ և բաժանումներ, կուսակցությունների ու կուսակցական համակարգերի ձևավորումն ու կայացումը և այլն,⁷³ ակնհայտ է, որ դրանք ամբողջական

⁷² Meleshevich, A., նշվ. աշխ.; Mainwaring S., 1999, նշվ. աշխ.; Spirova Maria, Political Parties in Post-Communist Societies: Formation, Persistence, and Change. London: Palgrave Macmillan. 2007. Mierzejewski-Voznyak, նշվ. աշխ.; McAllister I. and White S. Political Parties and Democratic Consolidation in Post-Communist Societies, *Party Politics*, 2007, 13, 2, 197–216. Randall V. and Svåsand L., նշվ. աշխ.

⁷³ Le Bas A., From Protest to Parties: Party-Building and Democratization in Africa. Oxford: Oxford University Press. 2011; Mudde, C., Populist Radical Right Parties in Europe. Cambridge: Cambridge University Press. 2007; Katz R. S. and Mair P., Changing Models of Party Organization and Party Democracy: The Emergence of

պատկերացում չեն ձևավորում և հաճախ չեն կարող հիմք դառնալ իրավիճակի շտկմանն ուղղված ծրագրերի մշակման համար:⁷⁴ Իսկ այդ նպատակով առանձին հետազոտությունների արդյունքների համադրումը կապված է այլ դժվարությունների հետ՝ նույն կոնկրետ կուսակցությունների վերաբերյալ բոլոր անհրաժեշտ չափումների ու ցուցիչների վերաբերյալ արդյունքների թերի լրակազմ, այդ հետազոտությունների համար տարբեր հեղինակների կիրառած մեթոդաբանությունների տարբերություններ, ինչը կարող է հանգեցնել արդյունքների անճշտության մեծացմանը և այլ աղավաղումների: Հատկանշական է նաև, որ շատ կուսակցությունների վերաբերյալ համընդգրկուն հավաստի տեղեկությունների ձեռք բերումը կապված է լուրջ, իսկ երբեմն՝ անհաղթահարելի տեխնիկական դժվարությունների հետ:

Կուսակցությունների ու կուսակցական համակարգերի գործունեությանը նվիրված և վերոհիշյալ դժվարությունները հաղթահարած համապարփակ հետազոտությունների շարքում առանձնանում է Մ. Տավիթսի աշխատությունը, որը նախկին կոմունիստական պետությունների կուսակցությունների համար

the Cartel Party. *Party Politics* 1995, 1(1): 5–28; **Van Biezen I.**, Political Parties in New Democracies: Party Organization in Southern and East-Central Europe. New York: Palgrave, 2003; **Bakke, E. and Sitter N.**, Patterns of Stability: Party Competition and Strategy in Central Europe since 1989. *Party Politics*, 2005, 11(2): 243–263; **Boix C.**, The Emergence of Parties and Party Systems. *The Oxford Handbook of Comparative Politics*, eds. Carles Boix and Susan Stokes. Oxford: Oxford University Press, 2007, pp. 499–521. **Basedau M. and Stroh A.**, Measuring Party Institutionalization in Developed Countries: A New Research Instrument Applied to 28 African Political Parties.” GIGA Working Paper No. 69, 2008.

⁷⁴ **Casal Bertoa F.**, Party systems and cleavage structures revisited: A sociological explanation of party system institutionalization in East Central Europe, *Party Politics*, 2014, 20, 1, 16–36. **Croissant A. and Volkelt Ph.** Party system types and party system institutionalization: Comparing new democracies in East and Southeast Asia, *Party Politics*, 2010; **Mainwaring S.**, 1999, ԱԶԲ. **Bielasiak J.** The Institutionalization of Electoral and Party Systems in Postcommunist States. *Comparative Politics*, 2002, 34, 2, 189–210. **Turovsky R.**, Party Systems in Post-Soviet States: The Shaping of Political Competition, *Perspectives on European Politics and Society*, 2011, 12, 2, 197-213.

առաջարկում է⁷⁵ կիրառել ինստիտուցիոնալացման ստորն բերվող հարացույցը, որը ներառում է կուսակցության ամբողջական կազմակերպական ներուժի՝ կառուցվածքի, անձնակազմի ու գործունեության միաժամանակյա ինստիտուցիոնալացում, ընդգծելով, որ դրանց առանձին-առանձին դիտարկումը և արդիականացումը կտրուկ նվազեցնում է ակնկալվող արդյունքը: 4 տարուց ավել տևած հետազոտության արդյունքում դիտարկվել է Չեխիայի, Էստոնիայի, Լեհաստանի, Հունգարիայի կուսակցությունների ու բազմակուսակցական համակարգերի գործունեությունը 20 տարվա ընթացքում:

Հետկոմունիստական երկրներում կուսակցությունների գործունեության արդյունքների՝ խորհրդարանում ստացած տեղերի մեծ տատանողականությունը մատնանշում է ինստիտուցիոնալացման անհրաժեշտություն, որն իրականացվում է հետևյալ վեց հիմնական ուղղություններով՝

- 1) կուսակցության կենտրոնական մարմնի պրոֆեսիոնալիզմ,
- 2) կազմակերպական ընդլայնվողականություն,
- 3) անդամների թիվ և ակտիվություն,
- 4) Կուսակցության արտաքին գործունեություն,
- 5) Արժեքային ուղղվածություն,
- 6) Անձնակենտրոնության բացակայություն:⁷⁶

Այս ուղղությունները մշակվել են որպես ընդհանրական առաջարկություններ հետկոմունիստական երկրների կուսակցությունների համար և յուրաքանչյուր կոնկրետ կիրառման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել այդ դեպքի առանձնահատկությունները:

⁷⁵ **Tavits M.**, *Post-Communist Democracies and Party Organization*, Cambridge University Press. 2013.

⁷⁶ Նույն տեղում

Եզրակացություն

ՀՏԵ, մասնավորապես, Վրաստանի և Ուկրաինայի բազմակուսակցական համակարգերի ձևավորման ու փոփոխությունների գործընթացների հետազոտությունը ցույց է տալիս, որ

1. Յուրաքանչյուր պետության համար համակարգաստեղծ նշանակություն ունեցող բազմակուսակցական համակարգի կայացումը ՀՏԵ-ում մնում է չհաղթահարված մարտահրավեր, որի հետևանքով պետության կայացումն է մնում չլուծված խնդիր,
2. Կայացած կուսակցություններ չունեցող երկրներում դրանց սահմանադրական գործառույթները յուրացնում են օլիգարխների ու կլանների ոչ ֆորմալ խմբերը, որոնց համար խորհրդարանում և գործադիր իշխանությունում ներկայությունը հնարավորություն է հատվածական շահերից, այլ ոչ թե պետական խնդիրների արդյունավետ լուծման անհրաժեշտությունից բխող լուծումների ապահովման համար,
3. Թեև «գունավոր» հեղափոխությունների իրականացումից անմիջապես հետո տիրապետող էին կարծիքները, որ դրանք կնպաստեն բազմակուսակցական համակարգերի, հետևաբար, նաև պետությունների կայացմանը, սակայն Վրաստանի և Ուկրաինայի դեպքերը վկայում են, որ գրեթե 20 տարի անց հնարավոր չէ մատնանշել որևէ առաջընթաց այդ ուղղությամբ,
4. Տրանսֆորմացիոն գործընթացներում գտնվող երկրում երկու տասնամյակի ընթացքում կայացած կուսակցություններ և կուսակցական համակարգեր չձևավորվելու դեպքում կամ երկրում հստատվում է կոշտ ավտորիտար վարչակարգ, կամ տեղի է ունենում «գունավոր» հեղափոխություն,
5. ՀՏԵ կուսակցությունների ու կուսակցական համակարգերի կայացման անհրաժեշտ պայման է դրանց ինստիտուցիոնալացումը, ինչի արդյունքում կուսակցական կառույցները ստանում են բովանդակություն և գործում են սկզբունքների ու արժեքների հիման վրա, որոնց արմատավորումը միակ միջոցն է

«գունավոր» հեղափոխությունների կանխման կամ դրանց հետևանքների հաղթահարման համար,

6. Արևմտյան մի շարք հիմնադրամներ և ինստիտուտներ փորձել են ծանրակշիռ մեթոդական ու ֆինանսական աջակցություն ապահովել ՀՏԵ, հատկապես Ուկրաինայի ու Վրաստանի կուսակցությունների ինստիտուցիոնալացման համար, սակայն այդ փորձերը, անգամ դրանց կազմակերպիչների խոստովանությամբ, լիովին ձախողվել են՝ չնայած զգալի ներդրումներին, ինչը պայմանավորված է ինչպես այդ երկրներում տեղի ունեցող քաղաքական գործընթացների առանձնահատկություններով, որոնք ընկալելի չեն արևմտյան փորձագետների համար, այնպես էլ կուսակցությունների ղեկավարների հետաքրքրության բացակայությամբ,
7. ՀՏԵ նորաստեղծ կուսակցությունների համար ինստիտուցիոնալացման հիմնական դժվարություններից մեկը ֆինանսական միջոցների սղությունն է, առանց որոնց այդ կուսակցությունները, որպես կանոն, դատապարտված են կամ վերացման՝ խորհրդրանական ընտրություններում մի քանի ձախողումներից հետո, կամ վերածվելու իշխանությունների հետ կլիենտելիստական կապով կապված կազմակերպությունների,
8. Քանի որ ՀՏԵ-ում օբյեկտիվ պատճառներով բացակայում է քաղաքական մշակույթը, կուսակցությունների ինստիտուցիոնալացման համար անհրաժեշտ է մի քանի պայմանների առկայություն՝
 - կուսակցության ղեկավարության համոզմունքը, որ առանց կուսակցությունների կայացման՝ ինստիտուցիոնալացման, սահմանադրական կարգի ձգտող պետության կայացումը անհնարին է,
 - կուսակցության ղեկավարության անսասան կամք կուսակցության ինստիտուցիոնալացման համար,
 - անհրաժեշտ գիտելիքներ ունեցող անձնակազմի առկայություն:

The Process and State of Institutionalization of Political Parties in Post-Soviet Transformation States: The Case of Ukraine and Georgia

TIGRAN TOROSYAN

Brusov State University

Shortly after the collapse of the USSR, a number of well-known experts argued that democratic regimes would soon be established in the newly independent states. Later, in the early 2000s, it became clear that a much more complex and unprecedented process was underway, i.e. the post-Soviet transformation. The countries having appeared in that process differ both in their trajectories and goals. According to that classification, Armenia, Georgia, Ukraine and Moldova belonged to a single group of countries aspiring to the formation of democratic regimes. In 2009, they joined the new “EU Eastern Partnership” initiative aimed at fostering the process of democratization. With regard to the establishment of consolidated democratic regimes in post-communist states, the formation of stable and representative party systems is of exceptional exemplary importance. The realization of this goal is possible through the institutionalization of political parties and party systems, due to which these structures are given proper content, and their activities are based on principles and values. This process has failed in post-Soviet transformation states, hindering the formation of democratic regimes. Moreover, this is also true for Armenia, Georgia and Ukraine, where “color” revolutions took place, one of the main goals of which was the establishment of democratic regimes. To find out why these failures occurred and what are the possibilities for a way out of the situation, the article analyzes the events related to the formation of political parties and party systems in Georgia and Ukraine - the most comparable states during the post-Soviet transformation period - which have been studied in a two-stage format - during “color” revolutions and after them. The analysis of the results of these periods shows that these stages do not vary significantly in terms of the process of democratization, and, in particular, the institutionalization of political parties and party systems.